ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

«20» 07 2016թ.
ՊԵ/510-1322

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն վարչապետ,

ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության 2016թ. գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանացանկում ներառված «Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ» անվանատողի շրջանակներում նախատեսված տոնական միջոցառման/ՀՀ ԶՈՒ կազմավորման օր/ կազմակերպման ծառայություն ձեռք բերելու նպատակով 2015թ. նոյեմբեր ամսին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԾՁԲ-12/1» ծածկագրով բաց ընթացակարգ, որը համարվել է չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի հիմքով, այն է՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին, ավելի ստույգ՝ ներկայացված հայտերը www.armeps.am կայքի/գնումների էլեկտրոնային համակարգ/ կողմից համարվել են հետագա գնահատման համար անընդունելի: Նշեմ, որ ժամկետների սղությունը անհնար է դարձրել մրցակցային ընթացակարգի ևս մեկ կիրառում:

Հաշվի առնելով միջոցառման համապետական նշանակությունը, այն հավուր պատշաճի, սեփական միջոցների հաշվին կազմակերպելու առաջարկով դիմել ենք հայտ ներկայացրած ընկերություններին: Նրանցից «ԳԵՎՏԻԳ» ՍՊԸ-ն տվել է համաձայնություն իրականացնելու աշխատանքները՝ հետագայում պայմանագրային ձևակերպումներ տալու պայմանով:

Այդ նպատակով, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ստանձնած պարտավորությունները կատարելու շրջանակներում ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության կողմից նախապատրաստվել է ՀՀ կառավարության որոշման նախագիծ/կցվում է/, որով նախատեսվում էր գնումը իրականացնել բանակցային ընթացակարգով առանց հայտարարությունը նախապես հրապարակելու, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ-

ք.Երևան, 0044, Բագրևանդի 5, Հեռ.(+374 10) 29-44-01, Ֆաքս (+374 10) 29-43-12

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱԾԽԱՅԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՄՈՒՏՔ
ՄՈՒՏՔԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱՐ
ՊԵ-20/86
20 07 2016

հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 30.01.2015թ. թիվ 105-Ն որոշման 25-րդ հոդվածի 6-րդ կետի գ ենթակետի հիմքով, այն է՝ չկանխատեսված հանգամանքների հետևանքով առաջացած և հրատապ համարվող գնումների դեպքում, բացառությամբ օրենքի 35-րդ կետի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու կամ տվյալ գնումը կատարելու համար նոր ֆինանսական միջոցներ հատկացվելու կամ պետության կարիքների համար գնումների դեպքերի, կնքվելիք պայմանագրին տալով հետին ուժ: Նախագծի վերաբերյալ եզրակացություն ստանալու համար այն ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարություն: Սակայն վերջինիս կողմից անհրաժեշտ է համարվել մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերումն իրականացնել մրցակցային ընթացակարգի կիրառմամբ, ինչը արդեն իսկ կայացած միջոցառման դեպքում կիրառելի չէ: Նույն խնդրով դիմել եմ Ձեզ, սակայն լուծման վերը նշված տարբերակը համարվել է ոչ նպատակահարմար:

Խնդրում եմ Ձեր որոշումը:

Առդիր՝ 1(մեկ) թերթ:

Հարգանքով՝

Ա. ՕՀԱՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N1555-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն "Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 10-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշման N1 հավելվածի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. դեկտեմբերի 24-ի "Հայաստանի Հանրապետության 2016թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին" N1555-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ:
2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը " Գնումների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի, ինչպես նաև ՀՀ կառավարության թիվ 105-Ն որոշման 25-րդ հոդվածի 6-րդ կետի գ ենթակետի հիմքով՝ բանակցային ընթացակարգով, առանց գնումների մասին հայտարարությունը նախապես հրապարակելու՝

1) "ԳԵՎՏԻԳ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքելու է մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման մասին պայմանագիր՝ կնքման օր սահմանելով 2016 թվականի հունվարի 27-ը,
2) Նշված պայմանագրով ստանձնած ֆինանսական պարտավորությունների վճարումը իրականացնելու է համաձայն 2015թ. դեկտեմբերի 24-ի "Հայաստանի Հանրապետության 2016թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին" N1555-Ն որոշմամբ սահմանված ժամանակացույցի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հովիկ Աբրահամյան